# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 08/19

ք. Գյումրի

«28» մարտի 2019 թ.

«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա" Մինասյանը, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կենդանի լույս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Իվանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված հետևյալ hոդվածներով ապրանքները (այսուհետ՝ Ապրանք), /Դեղագործական արտադրանք և բժշկական սպառման առարկաներ/, /Հիմնական անօրգանական քիմիական նյութեր/, /պարարտանյութեր/ իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 7 աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 93 735 /իննսուներեք հազար յոթ հարյուր երեսունհինգ/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված Ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 4): ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության Պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Ապրանքի օգտագործման պահանջը:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով Պայմանագիրը չի կարող փոփոխվել կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը և Պայմանագրի N 1, N 2, N 3 N4 N 4.1 հավելվածները, որոնք համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս, կազմված են 11 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենքները և համապատասխան իրավական ակտերը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| «Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ | «Կենդանի լույս» ՍՊԸ |
| ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2 | ք. Գյումրի Շիրակացի 5/4 |
| ՀՎՀՀ 05504412 | ՀՎՀՀ 05534453 |
| Հ/Հ 900018005554 | Հ/Հ 2050122037121001 |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ | «Ինեկո բանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ |
| Ա. Մինասյան | Տնօրեն՝ Ա.Իվանյան |
| ------------------------ (ստորագրություն) | ------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 28» մարտի 2019 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 08/19 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| | **33600000** | ***Դեղագործական արտադրանք և բժշկական սպառման առարկաներ*** | | | | | | | | |
| 1. | 33661126 | Յոդ 5% 30մլ | Յոդ D08AG03: Վերքեր մաքրող, մշակող թույլ մետաղական փայլով բյուրեղական նյութ, 5% 30մլ | սրվակ | 320 | 1280 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 4 | 20.12.2019 |
| 2. | 33631430 | Ասկոֆեն Պ N 10 | Ացետիլսալիցիլ աթթու, պարացետամոլ կոֆեին մոնոհիդրատ N02BA51, N02BA71: Համակցված դեղամիջոց, ունի ցավազրկող և ջերմիջեցնող հատկություն: Ասկոֆենի մեկ հաբի կազմի մեջ մտնում է 0.2 գ ացետիլսալիցիլ աթթու և ֆենացետին, ինչպես նաև 0.04 գ կոֆեին: | տուփ | 250 | 900 | 3.6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3.6 | 20.12.2019 |
| 3. | 33661126 | Իմոդիում 20մգ | Լոպերամիդ a07da03 Օժտված է հակափորլուծության էֆեկտով: Կազմի մեջ մտնող լոպերամիդն | հատ | 140 | 10500 | 75 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 75 | 20.12.2019 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | օպիոիդային ռեցեպտորների ընտրողական սինթետիկ արգելակիչ է: 20մգ | | | | | | | |
| 4. | 33621270 | Վալիդոլ 100մգ N10 | Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթ վում C01EX | տուփ | 110 | 165 | 1.5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1.5 | 20.12.2019 |
| 5. | 33661122 | Պարացետ ամոլ 500մգ N10 | Պարացետամ ոլ n02be01 անիլինդների խմբի ցավազրկող, ունի ջերմիջեցնող հատկություն Sopharma կամ համարժեք | տուփ | 120 | 240 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 20.12.2019 |
| 6. | 33691232 | Նիմեսիլ 2գրամ N 1 | Նիմեսուլիդ M01AX17, M02AA26: Հակաբորբոքա յին, ցավազրկող միջոց 2գր | տուփ | 130 | 2080 | 16 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 16 | 20.12.2019 |
| 7. | 33671119 | Տերաֆլյու 24,12գ N 1 | Պարացետամոլ , ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), ասկորբինա թթու N02BE51, N02B Համալիր միջոց հարբուխի և գրիպի բուժման համար: Օժտված է ցավազրկող, ջերմիջեցնող, հակաալերգիկ էֆեկտով /լիմոն/ 24,12գր փոշի | տուփ | 370 | 6660 | 18 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 18 | 20.12.2019 |
| 8. | 33631260 | Ասպիրին ՈՒՊՍԱ N 10 | Ացետիլսալիցիլ աթթու a01ad05, b01ac06, n02ba01 Ասպիրին ուպսա, վիտամին C 500մլ /10 հատ/ | տուփ | 1700 | 17000 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 20.12.2019 |
| 9. | 33631250 | Դեկսալգին փոշի 25մգ N 1 | Դեքսկետոպրո ֆեն (դեքսկետոպրո ֆենի տրոմետամոլ) | տուփ | 220 | 4400 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 20 | 20.12.2019 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | M01AE17: Ցավազրկող, դեղափոշի 25մգ | | | | | | | |
| 10. | 33661119 | Անալգին 500մգ N10 | Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), տրիացետոնամին 4-տոլուենսուլֆոնատ N02BB72: Ցավազրկող, դեղահաբ 500մգ Sopharma կամ համարժեք | հատ | 150 | 450 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | 20.12.2019 |
| 11. | 33141129 | Բժշկական դիմակ | Միանգամյա օգտագործման բժշկական դիմակ, երաշերտ, չափը՝ 17,5x9,3 սմ | հատ | 30 | 1050 | 35 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 35 | 20.12.2019 |
| 12. | 33141111 | Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 18x70մմ N 10 | Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 1.9x7.2մմ/10հատ/ | տուփ | 60 | 2100 | 35 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 35 | 20.12.2019 |
| 13. | 33661117 | Վալերիանի հաբ 20մգ 50հատ | Կատվախոտի հանուկ N05CM09 | տուփ | 130 | 390 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | 20.12.2019 |
| 14. | 33141115 | Բամբակ / 50գ/ 100% | Սպիտակեցված բամբակ խոնավածուծ, ոչ ստերիլ, չմանրէազերծված / 50գ/ 100% | տուփ | 150 | 3150 | 21 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 21 | 20.12.2019 |
| 15. | 33141110 | Ստերիլ բինտ 14սմ x 7մ | Սպիտակ մանրէազերծված բժշկական վիրակապ 14սմ x 7մ | տուփ | 180 | 3600 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 20 | 20.12.2019 |
| 16. | 33141118 | Ստերիլ անձեռոցիկ 16X14Xսմ N10 | Բժշկական, մանրէազերծված երկշերտ անձեռոցիկ 20հատ 16X14Xսմ | տուփ | 300 | 5400 | 18 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 18 | 20.12.2019 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17. | 33631430 | Ֆուրացիլինի լուծույթ 0,5լ | Ֆուրացիլինի լուծույթ 0,5լ պարունկում է ջուր 0.02%,ալկոհոլային լուծույթը (0.067%) | հատ | 350 | 700 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 20.12.2019 |
| 18. | 38411200 | Ջերմաչափ | Սնդիկային ջերմաչափ | հատ | 450 | 450 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | 20.12.2019 |
| 19. | 33631250 | Սպիրտ բժշկական 96% 250մլ | Էթանոլ d08ax08, v03ab16, v03az01: Հեղուկ սպիրտ 96% 0,25լ | հատ | 500 | 9500 | 19 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 19 | 20.12.2019 |
| 20. | 33631230 | Բետադին 10% 30մլ | պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18 | սրվակ | 650 | 5200 | 8 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 8 | 20.12.2019 |
| 21. | 33611170 | Նոշպա 40մլ 100հատ | Դրոտավերին a03ad02: Սպազմալիտիկ միջոց, ունի հարթ մկանահյուսվածքի հզոր սպազմալիտիկ ազդեցություն: | Տուփ | 2800 | 8400 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | 20.12.2019 |
| 22. | 33671130 | Պսիլո բալզամ 20գ | Դիֆենհիդրամին d04aa32, d04aa32 | տուփ | 3100 | 6200 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 20.12.2019 |
| 23. | 33661121 | Սպիրտ բժշկական 96% 100մլ | Էթանոլ d08ax08, v03ab16, v03az01: Հեղուկ սպիրտ 96% 0,1լ | սրվակ | 250 | 1250 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 20.12.2019 |
| | ***24310000*** | ***Հիմնական անօրգանական քիմիական նյութեր*** | | | | | | | | |
| 24. | 24311530 | Ջրածնի գերօքսիդ 100մլ 3% | Հեղուկ, հականեխիչ 100մլ 3% | սրվակ | 180 | 1620 | 9 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 9 | 20.12.2019 |
| | ***24310000*** | ***Պարարփանյութեր*** | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25. | 24411500 | Անուշադիր ի սպիրտ 10% | Ամոնիակի լուծույթ 10%, 30մլ | սրվակ | 150 | 1050 | 7 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 7 | 20.12.2019 |
| **Ընդամենը** | | | | | | **93735** | | | | |

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը `7 աշխատանքային օրվա ընթացքում :

**ԳՆՈՐԴ**

«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ

ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2

ՀՎՀՀ 05504412

Հ/Հ 900018005554

Երևանի թիվ 1 ՏԳԲ

Ա. Մինասյան

------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կենդանի լույս» ՍՊԸ

ք. Գյումրի Շիրակացի 5/4

ՀՎՀՀ 05534453

Հ/Հ 2050122037121001

«Ինեկո բանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ

Տնօրեն՝ Ա.Իվանյան

------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
« 28» մարտի 2019 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 08/19 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | |
|---|---|
| Գնման ժամանակացույց Մատակարարման ժամկետը և վայրը | Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը 7 աշխատանքային օրվա ընթացքում : Ապրանքի տեղափոխումը իրականացնում է մատակարարը , հասցե ք.Գյումրի ,Անի թաղ. 11փ. 5/2 |
| Վճարման ժամկետը /վճարման ժամանակացույց | Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում հաստատված ընդունման –հանձման արձանագրությունների հիման վրա` 20 աշխատանքային օրում : |

**ԳՆՈՐԴ**
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Մինասյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«Կենդանի լույս» ՍՊԸ

ք. Գյումրի Շիրակացի 5/4
ՀՎՀՀ 05534453
Հ/Հ 2050122037121001
«Ինեկո բանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Տնօրեն` Ա.Իվանյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 3*
*« 28» մարտի 2019 թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 08/19 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | Փետրվար մարտ | Մարտ ապրիլ | Ապրիլ մայիս | Մայիս հունիս | Հունիս հուլիս | հուլիս օգոստոս | Օգոստոս սեպտեմբեր | Սեպտեմբեր հոկտեմբեր | Հոկտեմբեր նոյեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-23 | **33600000** | ***Դեղագործական արփադրանք և բժշկական սպառման առարկաներ*** | | **91065** | **91065** | **91065** | **91065** | **91065** | **91065** | **91065** | **91065** | **91065** | **91065** | **91065** | **91065** |
| 24 | ***24310000*** | ***Հիմնական անօրգանական քիմիական նյութեր*** | | **1620** | **1620** | **1620** | **1620** | **1620** | **1620** | **1620** | **1620** | **1620** | **1620** | **1620** | **1620** |
| 25 | **24400000** | ***Պարարտա նյութեր*** | | **1050** | **1050** | **1050** | **1050** | **1050** | **1050** | **1050** | **1050** | **1050** | **1050** | **1050** | **1050** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Մինասյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Կենդանի լույս» ՍՊԸ

ք. Գյումրի Շիրակացի 5/4
ՀՎՀՀ 05534453
Հ/Հ 2050122037121001
«Ինեկո բանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Տնօրեն՝ Ա.Իվանյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 4*
*« 28» մարտի 2019 թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 08/19 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ ________________________
հվհհ _______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ_________________________
հվհհ_______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*« 28» մարտի 2019 թ. կնքված*
*ընփ-ՄԱ-ԱՊՁԲ 08/19 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*« 28» մարտի 2019 թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 08/19 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| «Կենդանի լույս» ՍՊԸ | «Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ |
| ք. Գյումրի Շիրակացի 5/4 | ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2 |
| հh 2050122037121001 | հh 9002180005872950 |
| «Ինեկո բանկ» ՓԲԸ | Գյումրիի գանձապետական բաժանմունք |
| հվհh 05534453 | Հվhh 05536355 |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«29» «մարտի» 2019 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «28» «մարտի» 2019 թ.

Պայմանագրի համարը՝ ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 08/19

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով «29» «մարտի» 2019թ. դուրս գրված NԲ2324297012 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1. | Ասկոֆեն N10 | Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին մոնոհիդրատ N02BA51, N02BA71: Համակցված դեղամիջոց, ունի ցավազրկող և ջերմիջեցնող հատկություն: Ասկոֆենի մեկ հաբի կազմի մեջ մտնում է 0.2 գ ացետիլսալիցիլաթթու և ֆենացետին, ինչպես նաև 0.04 գ կոֆեին: | 3.6 | 3.6 | 31.03.2019 | 29.03.2019 | 0.90 | 30.04.19 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Անալգին 500մգ N10 | Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), տրիացետոամին 4-տոլուենսուլֆոնատ N02BB72: Ցավազրկող, դեղահաբ 500մգ Sopharma կամ համարշեք | 3 | 3 | 31.03.2019 | 29.03.2019 | 0.45 | 30.04.19 |
| 3. | Դեկսալգին փոշի | Դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) M01AE17: Ցավազրկող, դեղափոշի 25mg | 20 | 20 | 31.03.2019 | 29.03.2019 | 4.4 | 30.04.19 |
| 4. | Իմոդիում 20մգ N 1 | Լոպերամիդ a07da03 Օժտված է հակափորլուծության էֆեկտով: Կազմի մեջ մտնող լոպերամիդն օպիոիդային ռեցեպտորների ընտրողական սինթետիկ արգելակիչ է: 20մգ | 75 | 75 | 31.03.2019 | 29.03.2019 | 10.5 | 30.04.19 |
| 5. | Պարացետամոլ 500մգ N10 | Պարացետամոլ n02be01 անիլինդների խմբի ցավազրկող, ունի ջերմիջեցնող հատկություն Sopharma կամ համարժեք | 2 | 2 | 31.03.2019 | 29.03.2019 | 0.24 | 30.04.19 |
| 6. | Նոշպա 40մլ N100 | Դրոտավերին a03ad02: Սպազմալիտիկ միջոց, ունի հարթ մկանահյուսվածքի հզոր սպազմալիտիկ ազդեցություն: | 3 | 3 | 31.03.2019 | 29.03.2019 | 8.4 | 30.04.19 |
| 7. | Յոդի ոգեթուրմ 5 % 30 մլ | Յոդ D08AG03: Վերքեր մաքրող, մշակող թույլ մետաղական փայլով բյուրեղական նյութ, 5% 30մլ | 4 | 4 | 31.03.2019 | 29.03.2019 | 1.28 | 30.04.19 |
| 8. | Նիմեսիլ 2գր | Նիմեսուլիդ MO1AX17, MO2AA26: Հակաբորբոքային, ցավազրկող միջոց 2գր | 16 | 16 | 31.03.2019 | 29.03.2019 | 2.08 | 30.04.19 |
| 9. | Տերաֆլյու 24,12գր | Պարացետամոլ, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), ասկորբինաթթու N02BE51, N02B Համալիր միջոց հարբուխի և գրիպի բուժման համար: Օժտված է ցավազրկող, ջերմիջեցնող, հակաալերգիկ էֆեկտով /լիմոն/ 24,12գր փոշի | 18 | 18 | 31.03.2019 | 29.03.2019 | 6.66 | 30.04.19 |
| 10. | Վալիդոլի հաբ 100մգ N10 | Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում C01EX | 1.5 | 1.5 | 31.03.2019 | 29.03.2019 | 0.165 | 30.04.19 |
| 11. | Վալերիանի հաբ 20մգ N50 | Կատվախոտի հանուկ N05CM09 | 3 | 3 | 31.03.2019 | 29.03.2019 | 0.39 | 30.04.19 |
| 12. | Սպիրտ բժշկան 96% 250մլ | Էթանոլ d08ax08, v03ab16, v03az01: Հեղուկ սպիրտ 96% 250մլ | 19 | 19 | 31.03.2019 | 29.03.2019 | 9.50 | 30.04.19 |
| 13. | Բամբակ 50գր | Սպիտակեցված բամբակ խոնավածուծ, ոչ ստերիլ, չմանրէազերծված / 50գ/ 100% | 21 | 21 | 31.03.2019 | 29.03.2019 | 3.15 | 30.04.19 |
| 14. | Բետադինա 10 % 30 մլ | պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, | 8 | 8 | 31.03.2019 | 29.03.2019 | 5.20 | 30.04.19 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | r02aa15, s01ax18 | | | | | | | |
| 15. | Ստերիլ բինտ 14սմ x 7մ | Սպիտակ մանրէազերծված բժշկական վիրակապ 14սմ x 7մ | 20 | 20 | 31.03.2019 | 29.03.2019 | 3.60 | 30.04.19 | |
| 16. | Ստերիլ անձեռոցիկ 16X14Xսմ N 20 | Բժշկական, մանրէազերծված երկշերտ անձեռոցիկ 20հատ 16X14Xսմ | 18 | 18 | 31.03.2019 | 29.03.2019 | 5.40 | 30.04.19 | |
| 17. | Սանտավիկ /կպչուն սպեղանի/ 1.9x7.2մմ N10 | Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 1.9x7.2մմ/10հատ/ | 35 | 35 | 31.03.2019 | 29.03.2019 | 2.10 | 30.04.19 | |
| 18. | Բժշկական դիմակ | Միանգամյա օգտագործման բժշկական դիմակ, եռաշերտ, չափը՝ 17,5x9,3 սմ | 35 | 35 | 31.03.2019 | 29.03.2019 | 1.05 | 30.04.19 | |
| 19. | Ջերմաչափ | Սնդիկային ջերմաչափ | 1 | 1 | 31.03.2019 | 29.03.2019 | 0.45 | 30.04.19 | |
| 20. | Ասպիրին ուպսա , վիտամին C 500մգ N10 | Ացետիլսալիցիլաթթու a01ad05, b01ac06, n02ba01 Ասպիրին ուպսա, վիտամին C 500մլ /10 հատ/ | 10 | 10 | 31.03.2019 | 29.03.2019 | 17.00 | 30.04.19 | |
| 21. | Պսիլո բալզամ | Դիֆենհիդրամին d04aa32, d04aa32 | 2 | 2 | 31.03.2019 | 29.03.2019 | 6.20 | 30.04.19 | |
| 22. | Սպիրտ բժշկական 96% 100մլ | Էթանոլ d08ax08, v03ab16, v03az01: Հեղուկ սպիրտ 96% 100մլ | 5 | 5 | 31.03.2019 | 29.03.2019 | 1.25 | 30.04.19 | |
| 23. | Ֆուրացիլինի լ-թ 1/5000 500 մլ | Ֆուրացիլինի լուծույթ 0,5լ պարունկում է ջուր 0.02%,ալկոհոլային լուծույթը (0.067%) | 2 | 2 | 31.03.2019 | 29.03.2019 | 0.70 | 30.04.19 | |
| 24. | Ջրածնի գերօքսիդ 100մլ 3% | Հեղուկ, հականեխիչ 100մլ 3% | 9 | 9 | 31.03.2019 | 29.03.2019 | 1.62 | 30.04.19 | |
| 25. | Անուշադիրի սպիրտ 10% 30մլ | Ամոնիակի լուծույթ 10%, 30մլ | 7 | 7 | 31.03.2019 | 29.03.2019 | 1.05 | 30.04.19 | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ստորագրություն | ստորագրություն |
| Ա.Իվանյան | Ն. Մարտիրոսյան |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 28 | Մարտ | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 29 | Մարտ | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 2324297012 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | | |
|---|---|---|
| Սերիա | Համար | |
| | | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | | |
| | | |

| | Պայմանագիր | |
|---|---|---|
| | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | 28 Մարտ, 2019 թ. | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | |
|---|---|
| **[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)** | 0 5 5 3 4 4 5 3 |
| **[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը** | |
| **[10] Անվանումը** | ԿԵՆԴԱՆԻ ԼՈՒՅՍ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| **[11] Բանկային տվյալները** | Ինեկոբանկ Գյումրու մ/ճ — N 2050122037121001 |
| **[12] Գտնվելու վայրը (հասցեն)** | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Տ.Ճարտարապետի 32ա 16 |
| **[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են** | Շիրակացի 5/4 |
| **[14] Լրացուցիչ տվյալներ** | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | |
|---|---|
| **[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)** | 0 5 5 0 4 4 1 2 |
| **[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը** | |
| **[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)** | ՀՀ ԿԳՆ <ԸՆՏԱՆԻՔ> ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| **[18] Բանկային տվյալները** | <Արարատբանկ> ԲԲԸ Գյումրի 2 մ/ճ — N hh 1510036776310100 |
| **[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)** | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ  ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2 |
| **[20] Լրացուցիչ տվյալներ** | |
| **[21] Ում միջոցով** | **Անուն, ազգանուն**: |
| | **Լիազորագիր** — **Համար**: |
| | **Լիազորագիր** — **Ամսաթիվ**: |
| **[22] Մատակարարման (առաքման) եղանակը** | ինքնաառաքում |
| **[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)** | ԳՅՈՒՄՐԻ Անի Թաղ. 11 Փող. 5 2 |

**[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Ասկոֆեն N10 | տուփ | 3.6 | 250 | | 900 | | |
| 2 | Անալգին 500մգ  N10 | տուփ | 3 | 150 | | 450 | | |
| 3 | Դեկսալգին փոշի | տուփ | 20 | 220 | | 4400 | | |
| 4 | Իմոդիում 20մգ N 1 | հատ | 75 | 140 | | 10500 | | |
| 5 | Պարացետամոլ 500մգ  N10 | տուփ | 2 | 120 | | 240 | | |
| 6 | Նոշպա 40մլ N100 | տուփ | 3 | 2800 | | 8400 | | |
| 7 | Յոդի ոգեթուրմ 5 % 30 մլ | ֆլ | 4 | 320 | | 1280 | | |
| 8 | Նիմեսիլ 2գր | տուփ | 16 | 130 | | 2080 | | |
| 9 | Տերաֆլյու 24,12գր | տուփ | 18 | 370 | | 6660 | | |
| 10 | Վալիդոլի հաբ 100մգ  N10 | տուփ | 1.5 | 110 | | 165 | | |
| 11 | Վալերիանի հաբ 20մգ  N50 | տուփ | 3 | 130 | | 390 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | Ջրածնի գերօքսիդ 3% 100մլ | ֆլ | 9 | 180 | | 1620 | | |
| 13 | Սպիրտ բժշկական 96% 250մլ | ֆլ | 19 | 500 | | 9500 | | |
| 14 | Անուշադիրի սպիրտ 10% 30մլ | ֆլ | 7 | 150 | | 1050 | | |
| 15 | Բամբակ 50գր | տուփ | 21 | 150 | | 3150 | | |
| 16 | Բետադինա 10 % 30 մլ | ֆլ | 8 | 650 | | 5200 | | |
| 17 | Ստերիլ բինտ 14սմ x 7մ | տուփ | 20 | 180 | | 3600 | | |
| 18 | Ստերիլ անձեռոցիկ 16X14Xսմ N 20 | տուփ | 18 | 300 | | 5400 | | |
| 19 | Սանտավիկ /կպչուն սպեղանի/ 1.9x7.2մմ N10 | տուփ | 35 | 60 | | 2100 | | |
| 20 | Բժշկական դիմակ | տուփ | 35 | 30 | | 1050 | | |
| 21 | Ջերմաչափ | տուփ | 1 | 450 | | 450 | | |
| 22 | Ասպիրին ուպսա , վիտամին C 500մգ N10 | տուփ | 10 | 1700 | | 17000 | | |
| 23 | Պսիլո բալզամ | տուփ | 2 | 3100 | | 6200 | | |
| 24 | Սպիրտ բժշկական 96% 100մլ | ֆլ | 5 | 250 | | 1250 | | |
| 25 | Ֆուրացիլինի լ-թ 1/5000 500 մլ | ֆլ | 2 | 350 | | 700 | | |
| **Ընդամենը** | | | | | | 93735 | | |

**Առաքող՝** IVANYAN ARTUR 2809710279
(անունը, ազգանունը)

**Ստացող** MINASYAN ARTUR 2505620598
(անունը, ազգանունը)

28/03/2019 22:44:59

29/03/2019 16:58:45